ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Կանաչուտ համայնք, գ. Կանաչուտ, (0235)6 00 76, kanachutgp@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ 10

«12 » դեկտեմբերի 2011թվականի N10Ա

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով՝ ավագանին որոշում է. Սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 դրամ.

2) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարության, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 2500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, բաղնիքների (սաունաների), խաղատների՝ ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200.000 դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ 1000.000 դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ:

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ, կրկնօրինակներ տրամադրելու համար ընթացիկ տարվա համար՝ 0 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Կանաչուտ համայնք, գ. Կանաչուտ, (0235)6 00 76, kanachutgp@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2011թվականի N11

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով՝ ավագանին որոշեց հաստատել գույքագրման հետևյալ արդյունքները և բոլոր ենթակառույցների գույքը թողնել հետագա գործունեության համար.

Մանկապարտեզ՝ 1. դաշնամուր – 1հատ
2. մահճակալ տումբա – 8հատ
3. կշեռք – 1հատ
4. ալյումինե պղինձ – 3հատ
5. սրբիչի կախիչ – 2հատ
6. մանկական սեղան -12հատ
7. գրասեղան – 1հատ
8. սպիտակեղենի կոմպլեկտ – 30հատ
9.վերարկուների պահարան – 2հատ

Գրադարան՝ 1. վարագույր/պատրաստի/-4
բեմի վարագույր – 1
քիվ – 7

սեղան	1x 173,25
երկաթյա պահարան	10 x 88,55=885,50
---“-----“----------	16x184=2944
.----“-----“---------	4x17,20=68,80
գրականություն	6393 կտոր

դաշնամուր – 1
Նստարան -25

Գյուղապետարան՝ 1. համակարգիչ P4 32 -2հատ
2. մոնիտոր LG – 2հատ
3. տպիչ HP 6300 – 1
4. UPS – LHTEX – 2հատ
5. գրասեղան -6հատ
6. սեղան – 1հատ
7. չհրկիզվող պահարան – 5հատ
8. կողասեղանիկ – 2հատ

9. հեռուստացույց – 1հատ
10. աթոռ – 10հատ
11. վարագույր – 8քմ
12. շերտավարագույր - 25քմ

Ավագանու անդամներ
Ժ. Եփրեմյան
Ա. Հովհաննիսյան
Ս. Կարապետյան
Ա. Հոխիկյան
Հ. Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Կանաչուտ համայնք, գ. Կանաչուտ, (0235)6 00 76, kanachutgp@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«13» դեկտեմբերի 2011թվականի N12Ա

2012թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ավագանին որոշեց հաստատել 2012թ. բյուջեն.

2012թ. բյուջեի մուտքային մասը կազմում է –	20497.2
որից՝	
Հարկային եկամուտներ	7020.0
այդ թվում՝	
Հողի հարկի գծով	5500,0
Գույքահարկի գծով	1400,0
Տեղական տուրքեր	120,0
Ոչ հարկային եկամուտներ	490,0
որից՝	
Վարձակալված հողի վարձավճար	130,0
Ծնողական միջոցներ	360,0
Դոտացիա	12387,2
Անասնաբուժ. ծառ.	600,0

Ծախսերի մասը ըստ հոդվածների

Ι. Կառավարման ապարատ

4111- աշխատավարձ	8840.0
4131- սոց. վճարումներ	1800.0
4212-էներգետիկ ծառ.	1000.0
4213-կոմունալ ծառ.	600.0
որից՝ խմելու ջուր	300.0
աղբահան.	300.0
4214- կապի ծառ.	200.0
4234- թերթերի բաժան.	150.0
4239- ընդ. բնույթի հանրային ծառ.	160.0
4252-մեք. ընթացիկ նորոգում	300.0
4261- գրասենյակ. նյութեր	200.0
4264- տրանսպորտ. նյութեր	500.0
4231- վարչական ծառ.	110.0
4729- այլ նպաստներ	962.2
4726- հուղարկավորության ծախսեր	200,0
4235- գույքի նկատմամբ իրավունքի գրանցում	100,0

4819- նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպ.-150.0
որից՝ Արարատ հիմնադրամ 100.0
այլ 50.0
Պահուստային ֆոնդ 1050.0

II.Մանկապարտեզի պահպանման ծախսեր 3330.0

4111- աշխատավարձ 2364.0
4131-սոց վճար 576.0
4212-էներգետիկ ծառ. 100.0
4213-կոմունալ ծառ. 50.0
4261-գրասենյակ. նյութեր 50.0
4267-սնունդ և տնտ. նյութեր 400.0
Անասնաբուժական ծառայություն
4241 – 600.0

Ավագանու անդամներ
Ժ. Եփրեմյան -
Ա. Հովհաննիսյան -
Ս. Կարապետյան -
Ա. Հոխիկյան -
Հ. Խաչատրյան -

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Կանաչուտ համայնք, գ. Կանաչուտ, (0235)6 00 76, kanachutgp@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

«13» դեկտեմբերի 2011թվականի N13Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերի պահանջներով՝ ավագանին որոշեց.

հաստատել Կանաչուտ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

1. Համայնքի ղեկավար – - 130.000դրամ

Հայեցողական պաշտոն

1. Համայնքի ղեկավարի խորհրդական- 1- 65.000դրամ

Համայնքային ծառայության պաշտոններ

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար -1- 95.000դրամ
2. . Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ – 1- 90.000դրամ
3. . Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ – 1- 65.000 դրամ

Տեխ. սպասարկման անձնակազմ

1. Հարկահավաք-1- 35.000դրամ
2. Պահակ/կատարածո -1- 35.000դրամ
3. Հավաքարար-1-35.000դրամ

Պայմանագրային աշխատողներ

1. Մշակույթի տան տնօրեն-1-55.000դրամ
2. Մշակույթի տան պահակ-1-35.000դրամ
3. Գրադարանավար-1- 35.000դրամ
4 Մանկապարտեզի տնօրեն -1-67.000դրամ
5. Դաստիարակ-1-65.000դրամ
6. Հաշվապահ-1 – 32.500դրամ
7. Դայակ-1- 32.500դրամ
8. Հավաքարար-1-32.500դրամ
9. Խոհարար-1-32.500դրամ
10. Պահակ-1-32.500դրամ

Ավագանու անդամներ

Ժ. Եփրեմյան –
Ա. Հովհաննիսյան -
Ս. Կարապետյան
Ա. Հոխիկյան –
Հ. Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԱՍԱՏՐՅԱՆ